

№ 4 ԱՊՐԻԼ 1887

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

№ 4

ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ «Աղբիւրի» գրական ալբոմ։

ԶԱՏԻԿ

Յանքոցի երգ (բանաստեղծութիւն) . . . . . Ա. Մ. Եզեկեան

Սէրը ՄաՀկայ (Լէօփարդի) Կատակ . . . . . Ա. Մ. Եզեկեան

Տանտիկին . . . . . Հասս

Քեռօրդուին Ջրաղացպան (մի արկած Քեռօրդուու կեանքից) . . . . . Ղ. Աղայեանց

Գառնուկ . . . . . Աշխէն

Գարնան պատկերները (Բանաստեղծութիւն) . . . Ագ. Ծատուրեան

Օր. Ովսաննա Թամամշեան (Լենդանագիր)

Մի Թերթիկ անցեալից . . . . . Ա.. Արասխանեանց

Տիկին Լիւկակ Թուքակը (Թարգ. Փրանսերէնից) . Օր. Սաթ. Շխեան

Յովհաննէս Հուս (շարունակութիւն) . . . . . Փ. Վարդանեան

Աւանդութիւն (Յ. Կրաշեվսկուց) . . . . . Ամբրոս

ԳԻՏՈՒԹԻՒՆ

Ընտանեկան զրոյցներ, (Դիսանդէից) . . . . . Խաչիկ

ՏԵՂԱԳՐԱԿԱՆ ՆԱՄԱԿԱՆԻ

Հօտ և Նախիր. Ը. . . . . Ն. Տէր-Աւետիքեան

ՀԵՏԱՔՐՔԻՐ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Ռումինիայի Թագուհու հեղինակութիւնը։ Լիմոնները լաւ պահպանելու համար։ Հին բրօնզի առարկաներին նոր կերպարանք տալու միջոց։ Նաւթ։ Ամերիկայի Սենատի անդամ Ստանդօրֆ։

ԶՈՒԱՐՃԱԼԻՔ

Հանելուկ։ Առաջարկութիւններ։ Ռեբուս։ Շուտասելուկ։ Սպասում ենք։

ԵՐԿՐՈՐԴ ԲԱԺԻՆ

Ընդածին հակումների կրթութեան մասին . . . Ս. Բէկնազարեան

Մի տարի Շվէյցարիայում („Մշակից“) . . . . . Գ. Արծրունի

Երկրաշարժ հարաւային Ֆրանսիայում և Իտալիայում ու Ֆլամմարիոնի զեկուցումները։ Մահացուցակ. Օր. Ովսաննա Թամամշեան։ Խառն լուրեր. Յարութիւն Սվաճեան։ Զմշկեանի յօբելեանը։ Ադամեանի դասախօսութիւնը։ «Լեզու», «Հանդէս Ամսօրեայ»։ Կրաշեւսկու հոգեհանդիստը Թիֆլիզում։ «Աղբիւրի» նոտաները եւ պալատական երաժիշտներ։ Ֆնարիկ Մանկական։ Մեր հրատարակութիւնները։ Արութիւն եւ Մանուէլի բաժանորդները։ Քեռօրդու երգերը։ «Մանկավարժանոց»։ Արեղնազան։ «Բուր. Ման.» Ռուսաստանի բաժանորդներ։ «Աղբիւրի» ստացիկայ №-ը եւ 1886 թ. «Աղբիւրի» թղթակցութիւններ։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

Ներկայ №-ում տպուած բեռուսի առաջին կարդացողը կը ստանայ 25 (քսան հինգ) ռուբլու հայերէն գրքեր։ Բացատրութիւնը պէտք է լինի բոլորովին ճիշտ և պարզ։ Միայն մեր բաժանորդները իրաւունք ունին ստանալ յիշեալ ընծան։

Տպագրութեան համար պատրաստ է

ԱՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԱՆՈՒԷԼ

ԱԶԳԱՅԻՆ ՎԷՊ

Սրա մի մասը քսան տարի առաջ տպագրուեցաւ կիսատ-պըռատ և տպագրական սխալներով լե�, բայց այսու ամենայնիւ կարգէ դուրս ընդունելութիւն գտաւ, և ամենքն էլ անհամբեր սպասում էին երկրորդ մասի տպագրութեանը: Այժմ թէ առաջինը և թէ երկրորդը մեացրած, լրացրած և ամբողջացրած է. օժանդակող ձեռքերի է սպասում, որ լոյս տեսնի: Բաժանորդագրիները երկու մանէթ է. կարելի է ուղարկել «Աղբիւրի» խմբագրութեանը և Կենդրոնական Գրավաճառանոցին: Ամեն մի տասը բաժանորդ գտնողը կամ գրուողը մի օրինակ ձրի կըստանայ: Մասնաւորը նամակով դիմած չենք մեր ծանօթներին և բարեկամներին, յուսալով որ նրանք ինչ որ կարող են անել՝ կանեն:

Ղ. ԱՂԱՅԵԱՆՑ

ՄՇԱԿ

Հրատարակվում է Թիֆլիզում, նոյն դիրքով և նոյն պրոգրամայով: «ՄՇԱԿԻ» տարեկան գինը 10 ռ. է, վեց ամսուանը 6 ռ.:

Գրուել «ՄՇԱԿԻՆ» կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ (Բարօնսկայա և Բազարնայա փողոցների անկիւնում, Թամամշեվի տանը):

Կայսերութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրուելու համար պէտք է դիմել հետևեալ հասցէով. ТИФЛИСЪ, Редакція газеты «МШАКЪ». *իսկ արտասահմանից.* Tiflis. Rédaction du journal arménien «MSCHAK»

Խմբ.-հրատարակող՝ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Պատկերազարդ հրատարակութիւն ամիսը երկու անգամ. տարեկան գինը 4 ռ.: Հրատարակվում է Պօլսում. տարբերութիւն կարելի է «Աղբիւր» ամսագրի խմբագրատանը:

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆՍ ՄԷՋ ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ ՄԵՐ ՀԵՏԵՒԵԱԼ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

	ռ.	կ.
1) «Աղբիւրի» 1883 թ. փառակազմ	10	—
Նոյնը անկազմ	8	—
2) « 1884 թ. փառակազմ	4	—
Նոյնը անկազմ	3	—
3) « 1885 թ. փառակազմ	10	—
Նոյնը անկազմ	8	—
4) Փայտաշէն խրճթից՝ ազնիւ տունը (Ջեմս Գարֆիլդեի կենսագր.) պատկերազարդ	„	60
5) Հսկայ մրջիւն (պատկերազարդ)	„	40
6) Ժան Բատիստ Լիւլիի մանկութիւնը	„	10
7) Ոսկի ձկնիկ I սերիա . .	„	30
Նոյն „ II սերիա . . .	„	05
8) Բուսական աշխարհից՝ մշակուած և անմշակ ծառի կեանքը	„	30
9) Զարանի Արամի արկածները (38 պատկերներով) .	„	50
10) Ֆրէնտոֆ դիւցաղն (նօրմանական հին զրոյց, պատկերազարդ)	„	40
Ն. Տ.-ԱԻԵՏԻՔԵԱՆ Քնար խօսնակ	„	50
ԼԻՏՎՕՍ Պօղոսեանի ուսուցչի օրագրից	„	20
ԱԼՖՕՆՍ ԴՕԴԻԷ Երկու մանրավէպ	„	15
ԱՆԳԵՐՍԷՆ Սոխակ և խոզաքաղ	„	20
ԴԻԿԷՆՍ Հարս և սկեսուր .	„	15
Կ. Մ. ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆ Ղրիմցի կընտանոց պրնը-փէշակը (Ղարաբաղի կեանքից)	„	20

ՀԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է ՆԵՐԿԱՅ 1887 ԹՈՒԱԿԱՆԻ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՆԸ

„ԱՂԲԻՒՐ"

ՄԻԱՄՍԵԱՅ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՀԱՆԴԷՍՈՒ

(ԵՐԵԽԱՆԵՐԻ ԵՒ ԴԱՍՏԻԱՐԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ)

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարէնը (այս է, տեսնում 12 համար, 3 – 4 տպագրական թերթից բաղկացեալ համարը)

Ներկայ 1887 թուականից «Աղբիւրը» կրհրատարակուի նոյն ուղղութիւնով՝ անհամեմատ շքեղ քան նախորդ տարիները, դերքն աւելի մեծացրած, փոխանակ 2—3 թերթի՝ 3—4 թերթ, և ծնողների բաժինը կրհրատարակուի՝ տարին երեք անգամի փոխանակ, ամեն ամիս առանձին տետրակներով։

Պրէմիաները կրլինին մեր թարգմանչաց՝ սրբոց ՍԱՀԱԿԱՅ և ՄԵՍՐՈՎԲԱՅ մեծագիր (62 սանտիմ երկարութիւնով և 45 ս. լայնութիւնով) վիմագրուած պատկերները։ Այդ պրէմիաներն արդէն պատրաստ են և բաժանորդ դրուողն անպապաղ կրստանայ Թիֆլիզում խմբագրատանը, իսկ օտարաքաղաքացիներին կուղարկուեն բաժանորդագինն ստանալուց յետոյ իսկոյն։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

I) Վէպեր, մանրավէպեր, պատմուածներ, առակներ, հէքեաթներ. Հանապարհորդութիւններ, կենսագրութիւններ։ II) Բանաստեղծութիւններ։ III) Գիտութիւն և արուեստ։ IV) Հեռադրքիր տեղեկութիւններ։ V) Այլև այլք։

ԶՈՒԱՐՃԱԼԻՔ

VI) Մանկական, Ֆրեոբէլեան, շախմատի և այլ խաղեր։ Բեբուսներ, Թուաբանական խնդիրներ։ Անեկդոտներ, Հանելուկներ, շուտասելուկներ։ VII) Երգեր՝ ճայնագրած (նոտաներով)։

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

VIII) Կրթութեան և դաստիարակութեան վերաբերեալ յօդուածներ և տեղեկութիւններ։ IX) Առաջարկութիւններ, խորհուրդներ։ X) Մատենախօսութիւն և նոր գրքեր։ XI) Խաչն լուրեր։ XII) Պատասխաններ. Յայտարարութիւններ։

Դարձեալ կրկնում ենք՝ որ թէ ներկայ 86 եւ թէ անցեալ 85 թուականների պէս տարուայ հէնց սկզբից ստիպուած չինինք «Աղբիւրի» բաժանորդագրութիւնը դադարեցնելու №№-ի ՍՊԱՌՄԱՆ ՊԱՏՃԱՌՈՎ. խնդրում ենք մեր բաժանորդներին վերանորոգել, եւ թէ նոր կամեցողներն անապարեն ստորագրուել, որպէսզի մենք եւս կարող լինինք մօտաւորապէս որոշել տպուելու օրինակների քանակութիւնը։

«Աղբիւրի» տարեկան բաժանորդագինը 3 ռ. է, անբաժան են գրքանցից և պրէմիաները, որոնց գինն է 2 ռ. ուրեմն «Աղբիւր» ստանալ կամեցողները պէտք է ուղարկեն թէ «Աղբիւրի» տարեկան բաժանորդագինը և թէ պրէմիաների վճարը ընդամենը 5 ռուբլի։

Հասցէն՝ Тифлисъ, Редакція «Агбюръ», իսկ արտասահմանից՝ Tiflis (Caucase) Rédaction du journal «AGBUR».

Խմբագիր-Հրատարակիչ՝ ՏԻԳՐԱՆ ՆԱԶԱՐԵԱՆՑ

ԱՂԲԻՒՐ

ՄԻԱՄՍԵԱՅ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ԵՐԵԽԱՆԵՐՔ

ԵՒ

ԴԱՍՏԻԱՐԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ

№ 4

ԱՊՐԻԼ

ԹԻՖԼԻԶ
ՅՈՎՀԱՆՆԷՍ՝ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆՑԻ ՏՊԱՐԱՆ
ՕՐԲԵԼԵԱՆ ՓՈՂՈՑ, № 1 | 2
1887

ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ

«ԱՂԲԻՒՐԻ» ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԱԼԲՈՄ

Дозволено цензурою, Тифлисъ, 29 Марта 1887 г.

Типографія И. Мартиросіанца, на Орб. ул., д. № 1 и 2

ՔՐԻՍՏՈՍ ՅԱՐԵԱՒ

Ի ՄԵՌԵԼՈՑ

մահուամբ զմահ կոխեաց և յարութեամբն Իւրով մեզ զկեանս պարգևեաց։

Յոհաննու

Եթէ ոչ հատն ցորենոյ անկեալ յերկիր մեռանիցի, ինքն միայն կայ, ապա եթէ մեռանիցի, բազում արդիւնս առնէ։

Աւետարան

ՑԱՆԿՈՑԻ ԵՐԳ

Ըմեռն անցաւ, թո՛ղ տաք գոմըդ,
Թափէ թըմբիր, էլ.
Հերի՛ք, կողքիդ շատ երկընցար,
Զարթիր, մշակ, էլ.
Գարնան շունչը մրտաւ ախոռ,
Ե՛լ, հողագործ, էլ.
Աչքը դռան կողմ՝ մրզում է եզն,
Ե՛լ, սերմնացան, էլ։

Դէհ, բերենք ու սարքենք
Լուծ՝ արօր, ցաք՝ մանկեռ,
Ու նորենք նորոգենք
Փոկ, ղընջիլ, սամետէք։

Ե՛լ վեր, հօտաղ, քանդէ լըծկանն,
Դուրս տար՝ վազե՛ն լաւ,
Եղջիւրներով քանդեն հողը,
Բոռան կանչեն լաւ.
Սայլ էլ լըծէ, քըշէ դաշտը,
Ուս ոտ բացուին լաւ,
Գերան լըծէ, քաշեն դէս դէն.
Էլ հերի՛ք է, լաւ։

Դաշտը սև սևացաւ,
Սըրտէն գոլն հանում է.
Քըրտընքի օրն հասաւ,
Դէհ, տէրտէր, սերմն օրհնէ։

Լուսիկ սիրուն, արևն անուշ,
Հողիկ կակուղ, օհ,
Փընչա՛ Սարդար, փընչա՛ Նազլի,
Բացուէր ակոս, օհ։
Հայէ՛ Աստուած, հայի մէկ յոյս,
Բուսցու սերմիկս, օհ.
Ոսկի հասկէն ոսկի փընջիկ
Քեզ կրձանեմ, օհ։

Եգ, արօր դընացին,
Դարձան՝ ու էլ գընացին,
Գընացին ու եկին՝
Հայ Հողիկ վարեցին։

Մայր Հողիկ,
Մեր սերմիկ
Քեզ պահէ
Աւանդիկ.
Երբ որ գայ
Իր պահիկ՝
Յետ տուր մեզ
Լիհատիկ։

Ա. Մ. ԵԶԵԿԵԱՆ

ՍԷՐԸ ՄԱՃԿԱԼ

(Լէօվարդէ)

ԿԱՏԱԿ

Էրը մէկ օր գետին դրրեց
Ջահրն և իւր նետերը,
Մի պարկ վերցրեց ու մի վարոց.
Ածեց արօրն՝ արտը հերկեց,
Լի լի սերմեց ակօսը,
Յետոյ դարձաւ երկինքն ի վեր՝
Այսպէս արաւ իւր խօսը.
Ո՛վ Արամազդ, լեր հովանի՝
Աջողեցուր վաստակս,
Թէ չէ՝ նորից ցուլ կըդարձնեմ*,
Կըդաս կ՝անես իմ վարըս։

Ա. Մ. ԵՂԵԿԵԱՆ

* Սէրը Արամազդին մէկ անգամ ցուլ էր դարձուցել, երբ սա փիւնեկեցոց Ագենօր Թագաւորի աղջկանը—Եւրոպային սերահարուած՝ միտքը դրել էր այդ կերպարանքով խաբել նորան և փախցնել։ Այդպէս էլ արաւ. տարաւ նորան այն աշխարհը՝ որ այնուհետև այդ աղջկայ անունով կոչուեցաւ ԵՒՐՈՊԱ։

ՏԱՆՏԻԿՆԻՆ

«Մարդը որ կայ՝ ջրաղաց է, իսկ կինը՝ ալրատուն. եթէ ջրաղացի ալրատունն անպէտք լինի՝ աղացած ալիւրը ջուրը կըտանի»։ Ալֆայեն ասած։

Լինում է չի լինում՝ մի կին է լինում և ունենում է երեք որդի, երեքն էլ պսակուած։ Մեռնում է այդ կինը, և որդիքը՝ խորին տխրութեամբ իրանց մօրը թաղելուց յետոյ՝ մեծ Հարսին, որի անունը Նազանի էր, տանտիկին են կարգում։

Նազանին էր, հէնց տանտիկնութիւնը ձեռք բերաւ թէ չէ, զուգուեց, զարդարուեց և տան վերի ճակատի բազմոցի վրայ ծալապատիկ նստեց, չկամեցաւ այնուհետև մատը բանի դիպցնել։ Զուտով տան բարեկարգութիւնը խանգարուեց. ոչ մի բան իր տեղը չէր. ամենայն ինչ աքան ցաքան վեր էր թափած. ոչ մի բան իր ժամանակին պատրաստ չէր լինում։ Նախաճաշիկը մինչև կըպատրաստուէր, ժամեր կանցնէին, այսպէս էլ ճաշին և ընթրիքին։ Հաց, աման, դրգալ, աղ և այլ այսպիսի բաները միշտ Հարևաններից փոխ առնելը մի շատ սովորական բան էր դարձել։ Զուտով Նազանին իր նազերով տանեցոց և բոլոր Հարևաններին ատելի դարձաւ։ Եղ-

բայրները տեսնելով որ էլ համբերել անկարելի է, իրանց մօր ամեն բարութիւնով լիքը տունը դատարկուել և անկարգութեամբ հողի է հաւասարուել՝ մտածեցին, և միջնէկ հարսին՝ Նարմանազուկին կարգեցին տանտիկին։

Նարմանազուկը՝ հետևելով Նազանուն՝ դեռ դերազանցեց էլ. ինքը ոչինչ չէր շինում, և ուրիշների արածի վրայ էլ սաստիկ տրտնջում էր ու վատաբանում։ Այսպիսով տան խանգարուած կառավարութիւնը աւելի ևս վատացաւ և հարևաններն էլ երես դարձրին, տեսնելով Նարմանազուկի վարմունքը։ Վերջապէս մտածեցին եղբայրները, և փոքր հարսին՝ Հերիքնազին ընտրեցին տանտիկին։

Հերիք-Նազն էր, հէնց տանտիկին կարգուեց թէ չէ, ամենից առաջ ասաց. «Ինչ որ Նազ արինք՝ Հերիք է. այժմ ամեն մարդ պէտք է գործ կատարի. գործ չկատարողին և դատարկ տուն եկողին ոչ տեղ և ոչ հաց կայ. համաձայն էք»։ Բոլորը միաբերան պատասխանեցին. «Համաձայն ենք, համաձայն. միայն թէ մեր տան մէջ կարգ ու կանոն լինի»։

Հերիքնազը իսկոյն թևերը վեր քաշեց, սկսեց ամենայն ժրութեամբ տունը սարքի ու կարգի մէջ դնել։ Ղուտով ամեն բան կարգի ընկաւ և տունը ծովի նման ծփում էր զանազան բարիքներով. Աստուծոյ արարած աշխարհի մէջ բան չկար որ տան մէջ չգտնուէր։ Հերիքնազի կառավարած տունը Հայր Աբրահամի տունն էր դարձել. ով տեղապէտի, կամ մի հազուագիւտ բանի պէտք ունէր, դիմում էր Հերիքնազին և անկարելի էր, որ դատարկ յետ դառնար։

Մի օր եղբայրներից մինը՝ դաշտից տուն վերադառնալիս՝ չկարողացաւ մի բան գտնել տուն բերելու, վերջապէս ճարահատած՝ մի սատկած օձ գտաւ և բերեց ու բակի մէջը ձգեց։ Արագիլը թռած տեղից տեսնելով օձին,

վայր իջաւ՞ և կտցին բռնած մի բան վայր ձգեց։ Ֆանտիկինը իսկոյն՞ շտապեց իմանալ, թէ ինչ էր արագիլի տարածը և ինչ վայր՞ ձգածը. և, աչքդ բարին տեսնի, մի մանեակ՝ թանգագին ակներով ու գոհարներով զարդարուած։ Հերիքնազը իսկոյն վեր առաւ և թաշկինակի մէջ ծրարելով, առանց ուրիշին ցոյց տալու՝ տարաւ դրաւ պահունի բաների արկղի մէջ և արկղն էլ լաւ կողպեց։

Դեռ օրը չէր մթնել, մունետիկը փողոցներով պտըտվում էր ու աղաղակում. «Թագաւորի աղջիկը այսօր պարտիզում զբօսնելիս՝ իր անգին ակներով զարդարած ոսկի մանեակը վայր է դրել իր վերնազգեստի վրայ, և մի արագիլ կտցել է ու թռել. Ստուած սիրողը, ով գտել է, թող տանի թագաւորին տայ, ստանայ հազար ոսկի ու թագաւորի շնորհը»։

Ձուտով ձայնը հասաւ գիւղը, որ թագաւորի քաղաքից շատ հեռու չէր։ Հերիքնաը մեծ տագրի հետ գնաց թագաւորի պալատը և տագրի հետ թագաւորին ներկայանալով՝ երեք անգամ գլուխ տուաւ ու ասաց.

«Թագաւորն ապրած կենայ. ահա մանեակը, որ ես գտել եմ. ստացիր և յանձնիր քո խաթուն աղջկան ու պատուիրիր, որ թանգագին հանդերձով ու մանեակներով պարտիզում չզբօսնի պարապ. մացառները հանդերձները կըպատռտորեն, իսկ արագիլը մանեակը կըթռցնի»։

Թագաւորը և մեծամեծները տեսնելով Հերիքնազի իմաստուն և վստահ խօսուածքը, շատ գովեցին նրան և թագաւորն ասաց. «Աղջիկս, ինչ որ կամենում ես, մինչև անգամ քո կշռով ոսկի, ուզիր ինձանից»։

«Թագաւորն ապրած կենայ, ասաց Հերիքնազը, քո շնորհիւ իմ տունը լիքն է ամեն բարութիւնով, ինձ ոչ ոսկի է պէտք և ոչ ուրիշ մի բան, բայց միայն քո առողջութիւնը։ Բայց եթէ շատ ստիպում ես, տուր ուրեմն միայն հազար ոսկին, որ մունետկի բերանով խոս-

տացած էիր գտնողին, որ մարդիկ իմանան թէ աշխարհիս մէջ անպէտք բան չկայ, և անպէտք, սատկած օձն էլ կարող է հազար ոսկի ստանալու պատճառ լինել»։

Թագաւորն ուրախութեամբ տուաւ՝ ինչ որ խոստացել էր և հրամայեց պատմել, թէ ինչպէս է գտնուել մանեակը։ Հերիքնազը պատմեց իր սկեսրի մահից յետոյ մինչև իր թագաւորին ներկայանալու դէպքերը։

Թագաւորն աւելի ևս հաւանեց Հերիքնազին, որդեգրեց նրան և ասաց. «Ահա, արդարև, ժրագլուխ կին՝ որ իր մարդու գլխի պսակը կարող է լինել»։ «Մարդս որ կայ՝ ջրաղաց է, իսկ կինը՝ ալրատուն. եթէ ալրատունն անպէտք լինի՝ ալիւրը ջուրը կրտանի»։

ՀԱՍՕ

ՔԵՕՐՕՂԼԻՆ ԶՐԱՂԱՑՊԱՆ

(Մի աշկած Քեօրօղլու կեանքից)

Էկ անգամ Քեօրօղլու ծառաներից մէկը՝ Քաչալ—Համզան՝ փախել էր։ Քեօրօղլին հեծաւ Սևուկը, որ իր ընտիր ձիաներից ամենից լաւն էր, և ընկաւ Համզայի ետևից, որ բռնէ նրան և պատժէ։

Համզան դեռ շատ չէր հեռացել։ Նա յետ մտիկ տուաւ, և տեսաւ որ հեռուից թոզ է բարձրանում ամպի պէս, իսկոյն գլխի ընկաւ, որ Սևուկի բարձրացրած թոզն է այն, ուրեմն ուր որ է՝ Քեօրօղլին պիտի հասնէ և բռնէ նրան։ Հնար չկար փախչելու։ Նրա բախտից՝ նոյն տեղը մի ջրաղաց կար, վազեց մտաւ ջրաղացը, երես-մերեսը ալրաթաթախ արաւ, շորերն էլ նոյնպէս, և այսպէս կերպարանափոխուած՝ դուրս եկաւ կանգնեց ջրաղացի դռանը։

Քեօրօղլին ձին քշած եկաւ և Համզային պատահելով՝ հարցրեց, թէ՝ «Այս ու այս նշանով մարդ չանցաւ արդեօք»։

—Ի՞նչպէս չէ, պատասխանեց Համզան, քո ասած նշաններով մի մարդ մտաւ այս բոպէիս իմ ջաղացը։

—Ուրեմն, բռնիր ձիս, ասաց Քեօրօղլին և իջաւ ձիուց։

Ձին թողեց Համզայի ձեռքին, իսկ ինքը մտաւ ջրաղացը. տեսաւ որ այնտեղ ոչ ոք չկար, դուրս եկաւ, որ բարկանայ ջաղացպանի վրայ. բայց կեղծ ջաղացպանը, այսինքն Համզան՝ արդէն Սևուկի վրայ էր։

— Անպիտան, ինձ խաբեցիր՝ բաւական չէ՞, համարձակեցար հեծնել նաև իմ Սևուկս, ասաց Քեօրօղլին բարկութեամբ։

— Շատ մի՛ խօսիր, պատասխանեց Համզան, այժմ Քեօրօղլին ես եմ, իսկ դու գնա ջաղացպանութիւն արա. նայիր միայն, որ լաւ աղաս, կորկոտ չանես։ Այս ասելով՝ Սևուկի գլուխը շրջեց ըստահակ ծառան և... այսօր ես անյայտացել, թէ էգուց...

Քեօրօղլին նոր գլխի ընկաւ, որ փախչողը և իր սիրած ձին փախցնողը Համզան էր, բայց էլ ինչ կարող էր անել։ Նա քա՜հ քա՜հ ծիծաղելով իր միամտութեան վրայ, գլուխը թափ տուաւ և մտաւ ջրաղացը։ Քեօրօղլին սովորութիւն չունէր յուսահատուելու. այս տեսակ դէպքերը նրա միշտ ուրախ ու զուարթ տրամադրութիւնը չէին խանդարում։ Նա տեսաւ որ ամբարը լիքն է ցորենով, բայց ջրաղացպանն ուրիշ տեղ է գնացել, ջուրը կապեց նաւի մէջ և բան ձգեց աղօրիքը։ Երբ որ չանչախն սկսեց իր ներդաշնակ չխչիկոցը, Քեօրօղլին նրան սազի տեղ համարեց և սկսեց երգել հետևեալ երգը —

Ա՜յ Քեօրօղլի, ջա՜ն Քեօրօղլի,
Ա՜յ Քեօրօղլի, ջա՜ն Քեօրօղլի,
Քեզ խաբեց Համզան Քեօրօղլի, հա՜յ, հա՜յ, հա՜յ,
Բայց որ դառար ջրա՜ղացպան,
Կանչիր թող գայ դան Քեօրօղլի, ջա՜ն։
Ջան Քեօրօղլի, ջա՜ն,
Ջան Քեօրօղլի։

Մարդուս բախտն էլ ահա այսպէս,
Պտրտվում է ջաղացի պէս,
Մէկ օր ահռելի վիշապ ես,
Միւս օր ջաղացպան, Քեօրօղլի։

Բայց դու էլի Քեօրօղլին ես,
Փողովրդի սիրելին ես.
Թէկուզ Ջաղացպան էլ լինես,
Քեզ պատիւ կըտան, Քեօրօղլի։

Թէև Սևուկիցըդ ղրկուած,
Բայց Թուր ունիս վրադ կապած.
Համզան ստրուկ, Թոկից փախած,
Իսկ դու ազատ խան Քեօրօղլի։

Մօտըդ կանչիր Հսկաներիդ,
Հաւատարիմ կտրիճներիդ,
Թող դան դտնեն փախած դերիդ,
Ձրկորչի Համզան, Քեօրօղլի։

Քեօրօղլու ձայնը շատ ահեղ էր։ Այս երգը երգելուց յետոյ բարձրացաւ Ջրաղացի տանիքի վրայ և այնպէս որոտաց, որ նրա ձայնը սար ու ձոր դղրդացնելով Հասաւ մինչև Ձամլիբէլ, ուր գտնվում էր Քեօրօղլու անմատչելի բերդը։ Քեօրօղլու կինը՝ Նիգեար խանումը՝ որ շատ սուր լսողութիւն ունէր՝ ամենից շուտ իմացաւ, որ իր ամուսինը մի անակնկալ փորձանքի է հանդիպել։ Իսկոյն իմաց տուաւ քաջերին, որոնք մի ակնթարթում դուրս թափուեցան բերդից և հասան իրանց խմբապետին։ Դրանց մէջ նշանաւոր էին Դամուրջօղլին, Իսաբ-Ալին և Գղիր օղլի Մուստաֆա-բէգը։ Երբ որ գնացին տեսան Քեօրօղլուն Ջրաղացպանութիւն անելիս, Սևուկը խլել տուած, շատ ծիծաղեցին, և Դամուրջօղլին մի երգով շնորհաւորեց Քեօրօղլու նոր արհեստը և նոր առուտուրը։ (Որովհետև Համզան Սևուկը փախցնելով՝ նրա փոխարէն իր ջորին թողել էր Քեօրօղլու մօտ։)

Ահա թէ ինչ է ասում Դամուրջօղլին և ինչ ձևով.

Նոր վաճառական ես դառել,
Առըտուրըդ շնորհաւոր,
Ձին տուել ես, ջորին առել,
Առըտուրըդ շնորհաւոր։
Ձին տուել ես, ջորին առել,
Առըտուրըդ շնորհաւոր, հոգի՛ս,
Առըտուրըդ շնորհաւոր։

Ալիւրըդ ջորուն կըբարձես,
Բազար կըտանես կըծախես,
Դեղին ոսկիք կըհաւաքես,
Առըտուրըդ շնորհաւոր։

Քեզ կասեն ուստա Առուշան[1],
Երբ կըդառնաս լաւ ջաղացպան.
Գլուխ գլուխ շահադ[2] կըտան,
Առըտուրըդ շնորհաւոր...

Դամուրջօղլի, շատ լաւ կանես,
Որ Քեօրօղլուն գովաբանես,
Ասես՝ լա՛ւ վաճառական ես,
Առըտուրըդ շնորհաւոր...

Դամուրջօղլին այսպէս երկար կըշարունակէր, բայց Քեօրօղլին նրան միջահատում է, ասելով՝ կատակի ժամանակ չէ, և ինքն է սկսում երգել այլ եղանակով և ահեղ ձայնով —

Գառաս փախել է մինչ Արաբստան,
Ճուտ արէք, ուր որ է, փնտրեցէք բերէք.
Ճըլնքին զարկելով՝ կապէք կռները,
Արաբ ձիու վրայ բարձեցէք բերէք։

---

[1] Քեօրօղլու ուղիղ անունն Առուշան է։

[2] Շահադ է ասվում աղալու համար տուած վարձը, որ մի յայտնի չափով տրվում է այն հատիկից, ինչ որ աղացվում է։

Ձրկնքին զարկելով՝ կապէք կռները,
Արաբ ձիու վրայ բարձեցէք բերէք։
Արի, հոգիս, արի՜,
Արի, անուշիկ։

Իր գործած յանցանքը գրէք իր վզին,
Որ չասեն՝ անմեղ էր, ի զուր պատժեցին.
Մորթեցէք եզան պէս, քերթեցէք կաշին,
Միսը մաս մաս արէք, ջարդեցէք բերէք։

Քեօրօղլին եմ, ես չեմ մնալ ջաղացպան,
Իմ Սեւուկին երբէք չի տիրել Համզան,
Գետնի տակն էլ լինի, հանեցէք նորան,
Ձիու պոչից կապած՝ քաշ տուէք բերէք։

Էլ ինչ ասել կուզի, որ Քեօրօղլու Հրամանը շուտափոյթ կատարուեցաւ։ Քեօրօղլուն պատահած այս արկածը պատմվում է և ուրիշ ձևով։[3]

Ղ. ԱՂԱՑԵԱՆՑ

[3] Քեօրօղլու բոլոր երգերը երեք եղանակ ունին միայն։ Այստեղ բերած երեք երգերից ամեն մէկը չոկ եղանակ ունի, որ ասել է երեք եղանակներն էս կան։ Երգերի ձևն ու տողերի չափը ցոյց են տալիս արդէն, թէ ո՞ն ինչ եղանակ ունի։ Երգելիս առաջին տան կազմութիւնը պէտք է տալ և միւս տներին։



ԳԱՌՆՈՒԿ

արուն էր. ամեն տեղ ծաղկել կանաչել էր. ոսկի արեգակը իր վառվռուն ճառագայթները սփռել էր աշխարհիս երեսին և նոր կեանք պարգևել բոլոր արարածներին, մեծերին ու փոքրերին, մարդկանց ու անասուններին, փոքրիկ մժեղներին ու միջատներին: Մարդկանց մէջ երևում էր մի առանձին շարժում և կենդանութիւն. փոքրիկ երեխաների ուրախութեանն ու խնդութեանը չափ ու սահման չկար. տան տիկնանց և հարս ու աղջկերանց հետ խօսել չէր լինել. ամենքն էլ զբաղուած էին ծանր գործերով. մէկը լուանում էր, միւսները տան կահ-կարասիքը դուրսը արեգակի առաջ դարսած, մաքրում, իստակում, այլք

խալի, բարձ ու վերմակներ թափ տալիս, որպէս զի որքան կարելի է շուտ վերջայնեն ու գնան եկեղեցի, ժամերգութեանը հասնեն, մեղայ գոչեն, հին մեղքերից ազատուին և ապա սրբուած ու թեթևացած, մաքուր ու անարատ սրտով ու խղճով սուրբ հաղորդութեանը արժանի լինին։

Գիւղացոց հետ որ՝ խօսել չէր լինիլ. ինչ որ Աստուած պարգևել էր իրանց, ինչ բարիք որ գտնվում էր իրանց տների քունջ ու պուճախներում, սայլով, ոտով, կամ ձիով ու եզով կրում էին քաղաք, որ լաւ գնով ծախեն ու ձեռք ձգած փողով իրանց ծակուծուկը կալնեն, չուլ ու փալասը կարկատեն կամ թէ նորը կարեն, ապա ուրախ սրտով Քրիստոսի Հրաշափառ Յարութիւնը տօնեն։

Ահա՛ մի քանի գիւղացի տղաներ, ուրախ ու զուարթ, թեթև տրեխները հագներին, մի-մի հատ մահակ ձեռքներին, թաշկինակները իրանց գիւղի դաշտերից ժողովուած բանջարով, սիբեխով ու եղինջով լցրած, բերում են քաղաք ծախելու։ Նրանք այնքան ուրախ են և այնպէս հանաքներ անելով են գալիս, որ երկար ճանապարհն իրանց չի նեղացնում և կամ ձանձրացնում. նրանց մտածմունքը միայն այն է, որ քաղաք կանաչները լաւ գնով ծախեն ու մի քանի կոպէկ վաստակելով, զանազան գոյնի ներկեր առնեն, իրանց համար զատկական ձու ներկեն ու ձեռքներն առած, ուրախ ուրախ կռուեցնելով՝ խաղալ սկսեն։

Ահա՛ և մի խումբ կանայք, մի-մի փոքրիկ զամբիւղ ձեռքներին՝ մէջները ձուով լիքը, մի երկու պուտուկ կաթ ու մածուն, մի քանի գունդ համեղ կարաք խուրջինում ուսերին ձգած, ոտները մերկ բոլորովին, ամեն հոգս ու ցաւ մոռացած, ուրախ զրից անելով, շտապում են որ շուտով տեղ հասնեն ու ծախելով իրերը, իրանց հարս ու աղջկերանցը. մաշիկ ու եաղմայ գնեն և նրանով նը-

բանց ջահել սրտերը ուրախացնեն ու զուարճացնեն։

Տեսէք և այս սայլը բեռնաւորուած ալիւրով, իւղով ու պանրով, ճռճռալով առաջ է շարժվում. իսկ միւս կողմից, ոչ շատ հեռու սայլից, մի քանի մարդկանց հսկողութեամբ, թռչկոտալով ու մայելով առաջ են խայտում ահագին բազմութեամբ անմեղ դառներ. դրանց մայոցը ամենի սիրտը խնդութեամբ լցնում է. դրանք են առաջին նըշանը զատկական մեծ տօնի, ուստի և ամեն մի մարդ, աղքատ թէ հարուստ, մեծ թէ փոքր միշտ դրանց սիրով են վերաբերվում և դրանց քաղցը մայոցներին ջա՛ն, ջա՛ն, բացագանչում ու ամեն կերպ աշխատում, որ իրանց տնեբումն ունենան այդ սիրելի կենդանուց, այդ անմեղ ապրաածից և դեղեցիկ սեղան կազմեն դրանց տապակած մսից։

—Արա՛մ, քեզ վնտրելով հոգիս դուրս եկաւ, շտապէ՛ր, շուտով գնանք վերևի կամուրջի մօտ, հայրիկս այնտեղ հիմայ անհամբերութեամբ մեզ է սպասում։ Ասում է փոքրիկ Վարդգէսը Արամին, որ իրանց խանութի աշակերտն էր։

—Ի՞նչու, ի՞նչ կայ սպասելու։

—Հայրիկս մեզ համար մի գեղեցիկ սպիտակ գառն է առել, պիտի գնանք տուն տանենք։

—Հա՛, ես էլ զարմացայ, թէ ի՞նչ կար ինձ վնտռելու. հիմայ հասկացայ. դէ՛հ, շտապենք, ոչինչ, շուտով կըհասնենք։ Արամը դրկեց սպիտակ և դեղեցիկ գառնուկը, իսկ Վարդգէսը՝ մի փունջ խոտ ձեռին՝ առաջ ընկած, շտապեցին տուն։

Թէ ի՞նչ աստիճանի էր հասել Վարդգէսի ուրախութիւնը, չի կարելի մի առ մի նկարագրել. մինչև տուն հասնելը խեղճ Արամի իրանն իրան հասաւ. ոչ թէ այն պատճառով, որ գառնուկը շատ ծանր էր և կամ ոտքերը շարժելով նրան նեղացնում էր, ոչ, բնաւին ոչ. գառնուկի փոխարէն Վարդգէսն

էր՝ անչափ ուրախութեան շնորհիւ՝ անհանգիստ անում Արամին։ մէկ խնդրում էր, որ մի փոքր էլ իրան տայ գառնուկը գրկելու, թէև ինքն էլ լաւ գիտէր, որ այնքան ուժ չունի, որ կարողանայ գառը գրկած գոնեա մի երկու քայլ ճանապարհ շարունակել. կամ թէ չէ, պընդում էր, թէ մի փոքր կանգնեցրու, խոտ տամ ուտի, քաղցած է. տեսնելով որ Արամը իրան չի լսում, հասկացնելով որ աւելորդ է փորձում կանգնեցնել խեղճ գառանը և խոտ տալ, վերջապէս ստիպեց որ իջեցնէ գետին, որ մի փոքր էլ ոտքով քշելով տանեն։

Վերջապէս մի կերպ հասան տուն. տան դրան մօտ գառան մայրը լսելով դուրս եկան Վարդգէսի երկու քոյրերը, որոնցից մէկը Վարդգէսից փոքր էր, իսկ միւսը մի տարով մեծ. նրանք ևս անչափ ուրախացան՝ երբ տեսան իրանց փոքրիկ գառնուկը, և ամենքը առանձին սառանձին սկսեցին խոտ տալ գառնուկին ու փայփայել, ականջները բռնել, աչքերը սրբել, պարանոցը շոյել, ու անթիւ գովասանքներ թափել. սակայն խեղճ գառնուկը շարունակ մայում էր իրան մենակ տեսնելով։

—Է՜հ, բաւական է, մի չարչարէք խեղճին, ասաց Արամը, տանենք ախոռ, թող հանգստանայ։ Բայց երեխաները չլսեցին Արամին. նրանք չէին կամենում ոչ մի կերպ գառից հեռանալ։ Կամաց-կամաց օրը մթնեց. մայրը եկեղեցուց տուն եկաւ. Վարդգէսը և փոքրիկ քոյր Վարսենիկը մօր առաջը կտրեցին, ու մեծ խնդութեամբ յայտնեցին, որ հայրիկը իրանց համար գեղեցիկ սպիտակ գառն է գնել։ Մայրը շատ ուրախացաւ, ու տեսնելով ձիւնի նման մաքուր ու սպիտակ գառնուկին, համբուրեց նրա աչքերը, որին հետևեցին և փոքրիկները մի-մի համբոյր տալով գառան ճակատին ու աչքերին. յետոյ մայրը ուրախացրեց որդոցը, որ սա գառնուկը առաջին նշանն է, որ յայտնում է թէ Զատիկը մեզ շատ մօտ է.

մօր խօսքերի վրայ երեխայոց ուրախութիւնը աւելի կըրկնապատկուեցաւ, որովհետև բացի գառնուկից, որ արդէն ունէին, մտներն ընկաւ և կարմիր ձուանները, որ երկու երեք օրից յետոյ պիտի պատրաստէր իրանց սիրելի մայրը։

Հարևանի փոքրիկ երեխաներն էլ եկան և հաւաքուեցան գառան շուրջը և սկսեցին զանազան փաղաքշական խօսքեր ասել անմեղ գառին։ Գառնուկը քիչ-քիչ սովորում էր Վարդգէսի վրայ. մի քանի օրից, նա արդէն ճանաչելով իր տիրոջը՝ քամակից ընկած, թռչկոտելով հետը գնում էր փողոց։ Վարդգէսը շատ խնդրեց հօրը և մի փոքրիկ զանգակ առնել տուեց ու կարմիր ժապաւէնով կապեց գառնուկի պարանոցին, որով նա մի առանձին գեղեցկութիւն պարգևեց, առանց այն էլ գեղեցիկ ու սիրունիկ գառնուկին, ու հետը միշտ խաղալով, վազեցնելով ու փոքրիկ զանգակի ձայնով զմայլելով անցկացրեց տօն օրերը, մինչև հասան ուսումնարան գնալու և գառի փոխարէն դասի վրայ նայելու ժամերը։

ԱՇԽԷՆ

ԳԱՐՆԱՆ ՊԱՏԿԵՐՆԵՐ

(Նուէր նկարիչ Գ. Բաշինջաղեանին)

արուն է արդէն. պայծառ է երկինք.
Պայծառ ու յստակ, որպէս Հայելին.
Ահա՛ շողում է և գարնան արև—
Կեանք ու լոյս բաշխում արթուն աշ-
խարհին։
Քաղցր է տեսարան՝—երկինք ու երկիր
Ժպտում են միմեանց, դէմքով սիրալիր։

***

Հաղուել, զուգուել է ամբողջ բնութիւն.
Փչում է մեղմիկ զեփիւռը գարնան.
Կենդանացել է արարած աշխարհ.
Մարդկանց հրճուանքին չկայ չափ, սահման։
Քաղցր է տեսարան՝—խնդութեամբ լցուած՝
Մարդիկ, բնութիւն ժպտում են միմեանց։

***

Դալար դաշտերում մատղաշ գառնուկներ,
Ո՜հ, ինչ գեղատես բացել են Հանդէս.
Փչում է հովիւն իր դիւթիչ սրինգ,
Պարում են գառներ, պարերն են պէս-պէս։
Քաղցր է տեսարան՝—գառն ու գառնարած
Բերկրալից սրտով ժպտում են միմեանց։

*
* *

Ահա ծաղկազարդ, կանաչ պարտիզում
Փթթել, ծաղկել է և կարմիր վարդիկ.
Սիրավառ սոխակն իր անուշ երգով
Տալիս է նրան գարնան աւետիք։
Քաղցր է տեսարան՝—սուրբ սիրով վառուած՝
Սոխակն ու վարդը ժպտում են միմեանց։

*
* *

Ահա սառնորակ, վճիտ աղբիւրիկ
Անուշ կարկաչմամբ վազում է արագ.
Անտառը լռիկ, կարծես կախարդուած՝
Լսում է նրա քաղցրաձայն ջուրթակ։
Քաղցր է տեսարան՝—աղբիւր ու անտառ
Ժպտում են միմեանց սիրով անբսպառ։

*
* *

Ուրախ ու աղատ, թևերը բացած,
Ահա բզզալով՝ մեղուն ժրաջան
Թռչում է դէպ՝ դաշտ, դէպ՝ հազարերանգ
Սիրուն ծաղկունքը կենսատու գարնան։
Քաղցր է տեսարան՝—ծաղկունքն ու մեղուն
Ժպտում են միմեանց, ողջունում գարուն։

*
* *

Ո՜վ, գարո՛ւն, գարո՛ւն, չքնաղ եղանակ,
Որքա՛ն դիւթիչ ես, որքա՛ն կախարդիչ.
Անպատմելի են քո բիւր տեսարանք—
Քեզ նկարել է նոյն ինքն Արարիչ . . .

ԱՂԷՔ. ԾԱՏՈՒՐԵԱՆ

† ՕՐ. ՈՎՍԱՆՆԱ ԹԱՄԱՄՇԵԱՆ

Տեսչուհի Ն. Նախիջևանու Գոզոյեան օրիորդական դպրոցի

1856—1887



Մի թերթիկ անցեալից

Բա դէմքի վրայ շատ բան կար գրած. բայց նրանց կարդալ չէր կարող ամեն ոք. բառերը գրած էին հրեշտակային վեստուրով։ Դուք մօտենում էք նրան և յանկարծ յետ էք քաշվում, որպէս նաւակը նաւավարի ուժգին թիավարութիւնից։ Մի րոպէ դուք կանգ էք առնում. դուք չգիտէք անգամ, թէ որտեղ էք կանգնած, բարձրաբերձ ժայռի վրայ, ուր հէնց այն է որ վախենում էք, թէ կըսլլուէք և անդունդ կըգլորուէք. մարդագետնի վրայ արդեօք, ուր պատրաստ էք ձգուել փափուկ խոտի վրայ, որը գլուխը կորում է յետ ու առաջ զեփիւռի մեղմ շշուկից և պսպղում արեգակի ճառագայթներից. թէ դուցէ երազումն էք։ Եւ այդ բոլորը ձեզ թւում է կարելի։ Դուք ոչինչ չէք հասկա-

նում այնքան բարակ, քնքոյշ և բանաստեղծօրէն գրած խօսքերից։ Եւ դուք չէք մոտենում, վախենալով ամեն մի շարժմունքից, տեսարանը աչքից չկորցնելու համար։ Բայց դուք արդէն անշարժ դառաք, կորցրիք զգայուԹիւնը, որը դուք միայն կամաց կամաց կրկին ձեռք էք բերում միմիայն վկայելու համար, որ դուք կրկին կանգնած էք անշարժ, աչքերդ չռած դէպի վեր, իբր ոգիներից բըռնուած։ Նայում էք նրա աչքերին և նկատում էք մի ինչ որ խորհրդաւոր բան։ Ձեր աչքերը դադարեցին չափազանց մեծ լարումից. դուք կրկին ձեզ կորցնում էք և դրեԹէ ուշքից զրկվում։

Բայց դա լոկ պատրանք չէ, վասն զի երազում էք։ Հեռու, հեռու, անտառի խորքերից մինում ձեզ երևցաւ հրեշտակային քնքշուԹեամբ մի դէմք. սա ունի իր գըլխին դափնեայ պսակ, և նրա վրայ երեք բառ՝ ԼՈՅՍ, ՍԷՐ, ԿԵԱՆՔ։

Դուք գուշակեցիք. զարԹնում էք։ Դուք ծնկաչոք ձեր սենեակումն էք տեսնում ձեզ, աչքերնիդ յառած դէպի երկինք լուսամուտի միջով. և յորդ արտասուք տեղած է յատակի վրայ։ Ձեր առջև ոչ ոք, բայց դուք պարզ տեսնում էք մի էակ, որը աւելի ու աւելի հեռանում է ձեզանից դէպի վեր, տարածուԹեան մուԹ խորքերը և միմիայն աղօտ կերպով դուք նշմարում էք, որ նա հետը տանում է մի պաստառ՝ աղեղնաձև գրած բառերով՝ ԼՈՅՍ, ՍԷՐ, ԿԵԱՆՔ։

Ա.Ի. ԱՐԱՍԽԱՆԵԱՆՑ

ՏԻԿԻՆ ԼԻԻԿԱԻ ԹՈՒԹԱԿԸ

Ես ասում եմ, որ ես շատ լաւ էի ճանաչում սրան. սա լաւ մեծացած թութակ ժակօն էր, որ իր լաւ յատկութիւնների համար բոլորից սիրուած էր և իր տիրուհուց էլ նոյնքան երես առած, որքան և Տիկին Լիւկաի սիրելի շունը՝ Նվարօն: Այս թութակը կարողանում էր լաւ խօսել և ամբողջ օրը շաղակրատում էր, որ թէև լաւ յատկութիւն է թութակի համար, բայց պակասութիւն է երեխաների համար: Նա այնպէս լաւ ընտելացել ու վարժուել էր, որ նրան դրեթէ ազատ էին թողնում տանը, պարտիզում. նա չէր հեռանում և միշտ վերադառնում էր իր թառատեղին:

Մի օր, սակայն, չգիտեմ ինչպէս պատահեց, մի կատուից զուցէ սարսափելով, ժակօն թռաւ պատի վրայով դրացու այգին, և այնտեղից էլ փողոց:

Այստեղ, խեղճ կենդանին, սարսափից քիչ սթափուելով, իրան բոլորովին անծանօթ տեղ գտաւ: Նա էլ չի գտնում իր շուրջը այն սովորական իրեղէնները, որոնց նա սովոր էր տեսնելու. ոչ ծառերը, ոչ տունը, ոչ մարդիկները: Ահա խեղճը միայնակ, օտար տեղ, կորսուած, շփոթուած.—Նա անդադար իր շուրջն է պտտում, այս կողմ,

այն կողմ ընկնում։ Յանկարծ մի անցորդից՝ վախենալով, մի քիչ աւելի հեռու թռաւ, յետոյ մի քիչ էլ հեռու...

Երևի նա կամենում էր վերադառնալ... բայց նա սխալ ճանապարհ վերցրեց, և փոխարէն տուն դառնալու, աւելի և աւելի հեռացաւ...



Զղջեմ նրան ինչ պատահեց ցերեկը։ Նա այդ չասաց։ Միայն, երեկոյեան դէմ, խեղճին տեսան, իր բնակարանից քաւորդ մղոն հեռու, տխուր նստած հասարակական զբօսատեղիի նստարանի յենարանի վրայ թառած, յոգնած, ցրտահարուած, կուչ եկած և գլուխը քաշ արած՝ ճաշ չկերած ու քնելու տեղը չիմացող ապուշի պէս. — Քաղաքային պահապանը, որ անցնում էր այդ տեղով, կալանաւորեց թափառաշրջիկին և տարաւ նրան ոստիկանատուն։

Նա թոյլ տուեց իրան տանել, առանց ընդդիմութեան, առանց մի բան արտասանելու, առանց փախչել փորձելու։

«Ահա՛, մի սրիկայ, որին մենք գտանք փողոցում. ի՞նչ պէտք է անել սրան, պարոն ոստիկանապետ։

—Դրան պէտք է յանձնել իր տիրոջը։ Դիտէք ո՞ւմ է պատկանում։

—Ո՛չ։ Բայց եթէ իրա՞ն հարցնենք, պատասխանեց պահապանը։

«Ո՞ւմն ես դու, փոքրիկ չարաճճի», ասաց նա խրատոտ ձայնով, յանկարծ նրան մօտենալով։

Այս շարժմունքից, այս ձայնից, խեղճ սարսափահար թուլթակը, դէպի յետ է փսխչում, անդադար թևերը իրար խփելով ու վշտաղին ձայնով աղաղակելով՝ ինչպէս օգնութիւն կանչող մէկը՝ «Տիկին Լիւկա, Տիկին Լիւկա»։

Երևակայեցէք թէ ինչքան ծիծաղեցին։

«Շատ բարի, ասաց ոստիկանապետը, որ նոյնպէս չկարողացաւ պահել իր ծիծաղը։ Բաւական է, իմացանք։ Տարէ՛ք սրան Տիկին Լիւկայի մօտ»։

Քառորդ ժամից յետոյ, նա նստած էր Հանդիստ իր բնակարանում, ուր բարի տանտիկինը, նրա պատմութիւնը լսելով, նրան արժանավայել ընդունելութիւն արաւ։

Եթէ նա չիմանար իր տիրուհու անունը, ի՞նչ կըպատահէր նրան, ձեզ եմ հարցնում։

Թարգ. Ֆրնսերէնից ՕՐ. ՍԱԹԻՆԻԿ ՇԽԵԱՆ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՀՈՒՍ

Կոմս. Լ. Ն. Տոլստոյի „Ясная Поляна“-ից

ոստանցի ժողովն եկած էին ամեն դասակարգի մարդիկ. այս ահագին բազմութեան մէջ կային՝ 1 պապ, 5 պատրիարք, 33 կառդինալ, 47 եպիսկոպոս, 500 ծայրագոյն վարդապետ և շատ քահանաներ: Աշխարհականներից կային — 1 թագաւոր, 2 թագուհի, 39 իշխան, 130 կոմս,. բազմաթիւ ասպետներ, վարժապետներ, դիտնականներ և ուրիշ կարգի մարդիկ՝ ընդամենը մօտ հարիւր հազար, 40 հազար երիվարներով: Ոմանք եկած էին պարտաւորութեամբ, ոմանք տեսնելու, թէ ինչ մարդ էր Հուս, ոմանք էլ այնպէս՝ բազմութեան օրինակին հետեւելով:

Հուս ունէր մի բարեկամ ասպետ, որի անունն էր Խլում: Պապն ասել էր Խլումին. «Եթէ Հուս իմ Հարազատ եղբօրս անգամ սպանած լինէր, դարձեալ նրան ոչ մի վնաս չէր հասնիլ»: Պապն արդէն հանել էր բանադրանքը Հուսի վրայից. բայց և այնպէս նա իրաւունք չունէր եկեղեցի մտնելու. նրան թոյլ էր տրուած միայն կանգնել դրան մօտ՝ նախադաւթում: Հուս չորս շաբաթ տնից դուրս չելաւ. այդ միջոցին նա մի ճառ էր պատրաստում, որ խօսելու էր դատաստանի առջև իրան պաշտպանելու համար: Մի և նոյն ժամանակ չարակամները զանազան սուտեր էին տարածում նրա մասին, ասելով, թէ նա իր քարոզները լսողներին մի-մի ոսկի է վճարում, թէ արդէն փախել է, թէ նրան գտել են յարդի տակ մի սայլի մէջ, և ուրիշ այս տեսակ բաներ . . .

Մի օր Խլում սպասեցը Հուսի մօտ նստած խօսում էր նրա գործի մասին։ Յանկարծ ներս մտան երկու եպիսկոպոսներ, պահանջելով որ Հուս պապի պալատը դնայ։ «Ո՞ւր է քանում այս մարդուն», ասաց Խլում, Հուսին տէր կանգնելով. «սա կանչուած է ժողովին ներկայանալու համար, կայսրից էլ ապահովութեան գիր ունի, որ իրան ոչ ոք չնեղէ. բայց ձեր միտքը, կարծեմ, չար է»։ Եպիսկոպոսները միամտացրին, թէ Հուսին ոչ մի չարիք հասնելու չէ, թէ պապը միայն տեսնել է կամենում նրան։ Մինչդեռ եպիսկոպոսներն այսպէս էին խօսում, զինուորները Հուսի բնակարանին մօտեցան և նրան շրջապատեցին։—«Ես կապուած եմ թագաւորից՝ ժողովին ներկայանալու, և ոչ թէ պապական դատաստանին, ասաց Հուս. այսու ամենայնիւ պատրաստ եմ հնազանդիլ և՛ պապի հրամանին»։ Այս ասելով, վեր կացաւ, բարև մնա՛ ասաց տանտիկնոջը և գնաց։

Սկսան հարցուփորձել Հուսին և վսխեցնել, թէ ո՞վ ես որ համարձակվում ես խօսել Սրբազան Հօր դէմ. զի՞նչ արդեօք, թէ լինչ պատիժ պիտի ստանաս դրա համար։

Հարցափորձութիւնից յետոյ կառդինալները վճռեցին բռնել Հուսին և փակել մի վանքի մէջ, մտածելով, թէ գուցէ մինչև թագաւորի գալը կարող կըլինին բոլորովին 'ի չիք դարձնել նրան։

Խլում վազեց գնաց պապի մօտ և ասաց. «Դու չէ՞ր ասողը, որ եթէ Հուս մինչև անգամ եղբօրդ սպանած լինէր, դարձեալ նրան ոչ մի զրկանք չէր հասնիլ. բայց ահա կառդինալներդ եկել բռնել են նրան և ուզում են փակել»։—Իսկ պապն ասաց. «Ես այդ բանում մեղք չունիմ. երևի թէ կառդիալների խորհուրդն է այդպէս վճռել»։

Պահապանները տարան Հուսին մի քահանայի մօտ և ոչ մի տեղ դուրս չէին թողնում։ Մի շաբաթից յետոյ տարան մի վանք և ձգեցին մի խուցի մէջ, որի որմերը

քարից էին և վանդակները՝ երկաթից։ Գիտութեամբ խոնար և վատ խուց տուին Հուսին, որ նա հիւանդանայ։ Այդ խուցին կից էր արտաքնոցը, և բոլոր աղբն ու գայռն մնցնում էր տակով. ուստի և մէջն այնպիսի գարշ հոտ էր կանգնած, որ հազիւ կարելի էր շունչ քաշել։

Այս բոլորի մասին Խլում գրեց կայսրին թէ. «Բռ ապահովութեան դրում ազատութիւն էիր խոստացել Հուսին, խոստացել էիր չզրկել նրան. բայց կառդինալները պատուէրդ արհամարհում են և դեռ դատաստան չեղած՝ ինչ որ ուզեն՝ անում են, կայսերական հրամանիդ հակառակ»։

Այնուհետև կայսրն էլ եկաւ Կոնստանց և ասաց կառդինալներին. «Դուք իրաւունք չունիք դատելու հաւատարիմ հպատակիս. ես եմ միայն նրա իշխանը, և ոչ թէ դուք. ես կրհրամայեմ խորտակել նրա բանտի դռները»։

Նրանք պատասխանեցին. «Հուսը հերետիկոս է. իսկ հերետիկոսներին դատողը եկեղեցին է, ոչ թէ թագաւորը։ Եթէ մեզ արգելք լինիս, իսկոյն կրցրուինք»։

Այս սպառնալիքի վրայ կայսրը փոքր ինչ զայրացաւ, տաքացաւ, բայց վերջ ի վերջոյ մեղմանալով, սկսաւ ամեն բանի մէջ կառդինալների հաճոյքը կատարել։ Թէպէտև կարող էր բանի տեղ չդնել նրանց և բռնի ազատել Հուսին բանտից, բայց չէր ուզում թշնամանալ կառդինալների հետ։ Հազարաւոր թշնամիներ ճարելուս փոխարէն, լաւ է՝ մէկ աւելորդ անհանգիստ մարդուց ազատուիմ, մտածում էր Սիգիզմունդ կայսրը։

Այդ միջոցին Հուս նստած էր հոտած խուցի մէջ և համբերութեամբ սպասում էր արձակուելու ժամին։ Վերջապէս նա հիւանդացաւ այդ գարշելի հոտից և անկողին մտաւ։ Պապը մի բժիշկ զրկեց, որ նրան ճար անէ. իսկ Հուսի բարեկամներն ասացին. «Եթէ կամենում էք որ Հուս թեթևութիւն ստանայ, տարէք նրան մի ուրիշ խուց. այնտեղ նա առանց բժշկի էլ կ'առողջանայ»։ Եւ յիրաւի,

մի աւելի լաւ խուց մտնելուց յետոյ՝ Հուս սկսաւ առողջանալ. բայց նրա մօտ ոչ ոք չէին թողնում և գրքեր չէին տալիս: Եան Խլում առպետը սիրտ էր տալիս նրան, յորդորելով որ ճշմարտութիւնը չուրանայ ազատութիւն ստանալու համար: Հուսն էլ գրում էր Խլումին. «Բոլոր յոյսս Աստուծոյ վրայ է, և վստահ եմ, որ մինչև մահս ճշմարտութեան հաւատարիմ կրմնամ: Աստուծոյ օգնութեամբ ես բոլոր ճշմարտութիւնը յերևան կրհանեմ ժողովի մէջ. լաւ է՝ կենդանուոյն այրեն ինձ խարոյկի վրայ, քան թէ այս զարհուրելի սենեակի մէջ ողջ-ողջ թաղուած մնամ: Ես կամենում եմ, որ բոլոր քրիստոնեաներն ասելիքս լսեն»:

Իսկ չարակամներն ասում էին Հուսին. «Դու ուրանում ես պապին և նրա սրբութիւնը, քարոզում ես, թէ յանցանք է պատէրներին՝ հողի և կայքի տէր լինելը. վռնդում ես գերմանացիներին Պրագից, պաշտպանում ես Վիկլեֆի աղանդը, մերժում ես մեր հաղորդութիւնը հացով, ասում ես թէ արևելեան հաղորդութիւնն աւելի անարատ է, թէ արևելցիք մեզնից լաւ են կատարում Քրիստոսի պատգամները. ահա այս են յանցանքներդ, և դու տրտնջում ես մեզնից, մինչդեռ արդէն վաղուց պէտք էր պատուհասել թէ՛ քեզ և թէ՛ քեզ հետևողներին»:

Հուս խնդրեց կայսրից, որ նրան դատաստանի կանչեն, ասելով թէ կամենում էր արդարանալ ժողովի առջև. «Դու ինձ 'ի ժողով հրաւիրեցիր», գրում էր նա. «այն ինչ այժմ բնաւ առանց քննութեան և դատաստանի բանտի մէջ են փակել ինձ»:—Հուս մտածում էր—միայն թէ թոյլ տային ինձ ժողովի առջև խօսելու, այն ժամանակ ամեն մարդ կրտեսնէր, որ ես չարաչար զրպարտուած եմ: Բայց կայսրն իր կայսերական խոստումը մոռացել էր և մատնել էր Հուսին ոսոխների ձեռքը:

ՓԻԼԻՊՊՈՍ ՎԱՐԴԱՆԵԱՆ

(Կըշարունակուի)

ԱՒԱՆԴՈՒԹԻՒՆ

(ՀԱՏՈՒԱԾ)[1]

„Дѣтское чтеніе“ *ամսագրից*

սա ինձ, ինչո՞ւ այդպէս պըզտոր են քո ջրերդ, մայր Վիսլա, սպիտակափայլդ մեր Վիսլա դետ։

—Ա՜խ, ինչպէ՞ս չպզտորուին իմ ջրերը, երբ նրանց մէջ այնքան արտասուք է թափվում։ Ահա՛ իմ ափերով, շըրջում են մարդիկ, տանջուած երկիւղից և յուսահատութիւնից. նրանք լալիս են, հեծեծում են, և կուրծքները ծեծելով, կանչում են, պաղատում են որ փրկութիւնը դայ հասնի իրանց, բայց փրկութիւնը դանդաղ է գալիս... Ահարկու Վիշապը նստել է խոր, մութ այրի մէջ՝ լերան տակ. նա կլանում է ամեն ինչ որ տեսնում է, լափում է զոհ զոհի ետևից և սարսափ է տարածում ամբողջ երկրի վրայ։ Երբ, նեղուած քաղցից, նա բաց է անում իր հրէշական երեսը և որոտալից բառաչ է արձակում, այն ժամանակ ամողջ լեառը դողում է և հեծում, մարդիկ ահից փռվում են երեսների

[1] *Այս հատուածը թարգմանուած է Լեհացի աշխարհահռչակ բանաստեղծ—մատենագիր՝ նոր վախճանուած Ցովսէփ Կրաշեւսկու մի փոքրիկ գրուածքից. նրա երկասիրութիւններն այնքան շատ են, որ մի մարդ իր կեանքում հազիւ կարող է բոլորը կարդալ վերջացնել։*

վրայ, գազանները այս կողմն այն կողմն են ընկնում անհանգիստ՝ ծմակի խորքում։

Կուշտ լափը լափելուց յետոյ շնթռնում է նա իր փոսի մէջ, մրափում է և քնի մէջ խռփացնելով՝ ծանր-ծանր շնչում է, վարակելով օդը իր աղտոտ և ժանգահոտ շնչով։

Խեղճ մարդիկ հանգիստ չունին ոչ ցերեկը, ոչ գիշերը, դողում են և փակվում են տների մէջ։ Դաշտերը դարձել են ամայի, հօտ ու նախիրը ամեն օր քչանում են։ Զար Վիշապը խեղդել է շատ երեխաներ և կիներ և էլի չի կարողանում կշտանալ, շարունակ թափքնուած է վհի մէջ և դարանամուտ եղած՝ յափշտակում է նոր զոհեր։

Ինչպէ՞ս ազատուել այդ հրէշից. ինչպէս ջախջախել սոսկալի գազանին։ Չկայ թուր, որ փշրել կարողանայ նրա պիրկ, հաստ ոսկրի պէս կաշին, չկայ մուրճ, որ ջարդէ նրա գլուխը, չկան ուժեղ ձեռներ, որ հուպ տան նրա գարշելի որկորը։

Յուսակտուր եղած՝ Կրակ թագաւորը փակուած նըստած է իր պալատում։ Ամբողջ օրեր նա նստած միայնակ, աչքերը ձգած գետին՝ մտածում էր մտածում, թէ ինչ կերպով ազատուի հրէշից։

Եօթն ամիս բոլորելուց յետոյ Կրակ թագաւորը կանչեց իր մօտ հաւատարիմ Սկուրուն և ասաց նրան. «Գնա իմ նախիրից ջոկիր ամենախոշոր եզը և մի քանի գեր ոչխար. մորթիր նրանց և մաքրիր՝ ու փորոտիքը դուրս թափիր ջրի մէջ։ Յետոյ վեր առ այրուող կուպը, ծծումբ և վառ ածուխ, այդ ամենով լցրու մորթած կենդանիների փորը, ապա տար դրանց Վիշապի այրի մօտ և սպասիր. հէնց որ կըլսես հրէշի սովի բառաչը, ձգիր այդ կերակուրը նրա բաց երախը (բռէխ, բերան)։

Հաւատարիմ Սկուրուն ամեն բան պատրաստած կանգնած էր վհի առաջ։

Ճուտով մռնչաց հրէշը. այրի մէջից կուրի մօտե-

նալն իմանալով, երևեցաւ ահագին բացուած երախը. Սկուրուն ձգեց պատրաստած խորոտիկները նրա բերնի մէջ. «Ա՛ռ, ո՛վ Հրէշ, կե՛ր, անիծեալ գազան, կեր և տրաքուիր իմ այս հիւրոյթից»: Կուլ տալով եզը և ոչխարները, վիշապը բղաւեց այնպէս, որ լեռը թնդաց և գիւղի տները շարժուեցան: Այրում գալարվում էին փորոտիքը նզովեալ գազանի. սաստիկ պապակուելով ծարաւից, նա դուրս եկաւ այրի միջից, ընկաւ Վիսլա գետի վրայ և սկսաւ լակել պաղ ջուրը: Բայց ինչքան որ նա խմում էր, այնու ամենայնիւ Վիսլայի ջրերը բաւական չէին նրա պասուքը յագեցնելու, մեղմացնելու նրա ներսի դին այրող տապը. և նա խմեց, խմեց այնքան, որ ուռաւ, տրաքեց և սատկեց:

Կրակ թագաւորը թուրը ձեռին դուրս եկաւ պալատից, գնաց Վիսլա գետի ափը, կտրեց Հրէշի գլուխը և մտցնելով բարձր ձողի ծայրը, դարձաւ այդ յաղթանակով քաղաք, որի վեհերկոտ բնակիչները դեռ չէին համարձակվում տներից դուրս գալ:—Սիրտ ա՛ռ և հանգի՛ր, իմ սիրելի ժողովուրդ, ձեր տանջանքների վախճանը հասել է. տեսէք, չկայ այլևս Հրէշը, չկայ չար վիշապը: Դուրս ելէ ուրեմն, հողագործ, քո գութանով դաշտը. Հովիւ, դուրս քշիր քո հօտը առանց երկիւղի. խաղ արէք, երեխէրք և գուարճացէք անհոգ կերպով սարերում. չկայ այլ ևս Հրէշը, չկայ չար վիշապը:

Թռչունները ճուռոդեցին օդի մէջ, ձայնեղ դայլայլով աւետեցին ուրախալի Համբաւը, որ քամիներն էլ տարան դաշտերին հաղորդեցին:

Ձրջակայ բնակիչները, վիշապից ազատուելու համար ուրախացած, ժողովուեցան այրի մօտ, հողով ծածկեցին Հրէշի գարշահոտ վիհը և այն լերան բարձրութեան վրայ քաղաք շինեցին ի յիշատակ յաղթութեան ընդ դէմ վիշապի: Կրակ թագաւորը նստեց այդ քաղաքում և սկսեց կառավարել երկիրը: Երկար ժամանակ և իմաստութիւնով կառավարեց նա այդ երկիրը. աչալուրջ հսկելով չորս կողմի վրայ և պահպանելով երկիրը չորս կողմի ժողովուրդների յարձակումներից:

ԱՄԲՐՈՍ

ԸՆՏԱՆԵԱԿԱՆ ԶՐՈՅՑՆԵՐ

(Դիսանդէից)

Գ.

Ընցեալ անգամ մի քանի օրինակներով բացատրելով օդի ոյժը, հիմա էլ առաջ կբերեմ մի քանի փորձեր, որոնք պարզ ցոյց կըտան ջրի ոյժը, որից մարդիկ այնքան մեծամեծ օգուտներ են քաղում։ Ի՞նչ հիացում և ինչ զուարճութիւն է սլատճառում մեզ շադրուանը, երբ վեր է խփում ջուրը. ինչ փառահեղ տեսարան է, երբ ահագին շոգենաւը սլանում է ջրի մակերևոյթի վրայ. զբօսնել նաւակում լճակի վրայ, մեծ ցնծութիւն է մեզ համար. բայց մենք էս առաւել կրհրճուինք, կրզմայլուինք և հոգով կբարձրանանք, եթէ մտածենք էլ թէ՝ այդ ինչ ոյժ է, որ մեզ պահում է մի կտոր տախտակի վրայ։ Ջուրը ունի ներքևից վերև ճնշելու ոյժ։ Որոշ ծաւալով ջուր և մէկ ուրիշ հեղանիւթ կամ պիրկ մարմին, նոյն որոշ ծաւալով վեր առած, եթէ քաշենք, հեղանիւթ կամ պիրկ մարմինները, որոնք թեթեւ կրդան ջրի համանման ծաւալից՝ նրանք ջրի վրայ կրկանգնեն և չեն խորասուզուիլ. մի մարմին, որ ընկղմվում է ջրի մէջ՝ կորցնում է իր ծանրութիւնից—

թեթևանում է, իր ծաւալի չափ ջրի քանակութեան ծանրութիւնով. այդ օրէնքը կոչվում է Արքիմէդի, որի գիւտն է։

Գանք մի քանի ամենահասարակ փորձերի. օրինակ, անենք Արքիմեդի օրէնքի փորձը։ Մի բաժակ լիքը ջրի մէջ ձգենք թելից կախ արած մի փոքրիկ, ինչ ձևի կուզէ, մարմին, ասենք մի կտոր քար. ի հարկէ որ քարի ծաւալի չափ ջուր խոկոյն դուրս կրթափուի բաժակից. յետոյ բաժակը



դնենք կշեռքի մի թաթում, սրա տակից էլ կախ ձգենք թելով քարը. կշեռքի միւս թաթումն էլ դնենք ծանրաչափ «քարեր», այնքան որ կշեռքի երկու թաթերը հաւասարակշռուին. հիմա եթէ կախ ընկած քարի տակ բռնենք մի այլ բաժակ ջրով, այնպէս որ յիշեալ քարը խարասուզուի ջրի մէջ, կընկատենք որ կշռքի հաւասարակշռութիւնը խանգարուեցաւ, որը վերականգնելու հա-

մար հարկաւոր է կշեռքի թաթի մէջ եղած բաժակը կըրկին լցնել ջրով, այսինքն այնքան ջուր ածել, որքան նըրանից թափուած էր, երբ նրա մէջ ձգեցինք քարը և որի ծաւալի չափ ջուր էր հեղուել լիքը բաժակից։

Ջրի ներքևից վերև արած ճնշողութիւնը ակնյայտնի անելու համար հետևեալ հեշտ գործողութիւնն արէք. մի խողովակի մէկ բերնին դրէք մի կտոր հաստ կաղմի



թուղթ, որը պահելու համար վրան թել ամրացրէք, ծայրը ձեր ձեռքում պահելով. ապա խողովակը փակկողմից մտցրէք ջրի մէջ մի անօթում, յետոյ ածելով խողովակի մէջ ջուր, մինչև որ հաւասարուի խողովակի ջրի մակերևոյթը անօթի մէջ եղած ջրի քանակութեան, դուք կընկատէք որ նոր պոկուեց թուղթը խողովակի բերնից, իսկ մինչև այդ՝ անօթի ջուրը իր ճնշողութիւնով թղթի վրան, պահում էր

նրան, մինչև ջուրը չածեցինք այնքան որ երկու ճնշողութիւններ իրար հաւասարելով, միացան:

Նաւերը լողում են ջրի երեսին հեղուկների ճնշողական ոյժով. նոյն ոյժի զօրութիւնովն է որ ջուրը վեր է խփում շաղրուանից:

Հեղանիւթերի նեղլիկ անօթների միջով՝ արանքներով գնալը կամ ինչպէս ասում ենք ծծուիլը՝ սովում է նոյնպէս մազականութեան օրէնք: Վերցնենք մի նեղ կտոր դորձած ժապաւէն, օրինակ մահուդի կտոր, դրա մի ծայրը դնենք ջրով լի բաժակի մէջ մի քիչ բարձր տեղ, մի ծայրն էլ դատարկ բաժակի մէջ առաջինից ներքև դրած. մի ժամից յետոյ կըտեսնենք որ վերի բաժակից բոլոր ջուրը կանցնի ներքևի դատարկ բաժակը: Լամպի նաւթն էլ նոյն ձևով բարձրանում է պատրոյկի միջով, և այլն: Նոյն

կերպով է բացատրվում հեղուկների մակերևոյթների դուրս պրծած լինելը. այդպէս օրինակ մի բոլորովին լիքը ջրով բաժակի մէջ կարելի է ձգել մինչև 10—12 փոքրիկ դրամներ, որ առանց մի կաթիլ ջուր անցամ դուրս թափուէր բաժակից: Ի հարկէ այստեղ մենք այս ամենը պատմում ենք հնար եղածին չափ համառօտ, հաղորդելով ամենասկզբնական տարրական մի քանի տեղեկութիւններ, յուսալով շարժել մեր ուսումնասէր ընթերցողների հետաքրքրութիւնը այնքան, որ նրանց մէջ ծագի սէր ընութիւնն ուսումնասիրելու, աւելի փորձեր իրանք անելով և աշխուժով սովորելով բնագիտական դասերը:

ԽԱՉԻԿ

ՏԵՂԱԳՐԱԿԱՆ ՆԱՄԱԿԱՆԻ

Ը.

ՀՕՏ ԵՒ ՆԱԽԻՐ

արը գնացող ժողովուրդները լեռնային արօտներում բնակվում են վրաններով մէջ. բացառութիւն են կազմում Գեղարքունիքի հայ գիւղացիները, որոնք սարերում իրանց արօտատեղերում հաստատ տներ—խրճիթներ ունին շինած. դրանց անուանում են զոմաներ կամ զոզաներ: Զոմանների խրճիթները տեղական բարբառով կոչվում են հոլիկ, որ կընշանակէ կլորիկ տնակներ: Հոլիկները կէս գետնափոր, անտաշ քարից և հողից՝ կլորաձև շինած մի տեսակ տնակներ են, կեղտոտ, խոնաւ, մութ. ունին մի մուտք և մի պստիկ յերդիկ առաստաղի մէջ. հոլիկների ներսը մի երկու բաժանմունք ունի, որոնցից մէկում կայ մի փոքրիկ թոնիր: Այդ հոլիկների մէջ են գիշերները քնում կիները և աղջիկները. այդ տեղ են պատսպարվում նոյնպէս հորթիկները, գառները. կովերն ու եզները մնում են շրջափակ տեղում՝ հոլիկին կպած, բացօթեայ: Նոր-Բայազիդի հայ գիւղացիները սարն են դրկում հօտերի և նախիրների հետ միայն իրանց կիները, մանաւանդ ջահիլ աղջիկները և երեխաները, իսկ տղամարդիկ գրեթէ գիւղումն մնում են գիւղում, դաշտային պարապմունքի համար: Գիշերը խեղճ կիները և աղջիկները մտնում են ցեխոտ, խեղդուած օդով հոլիկի մէջ, դուռը պինդ փակում են ու քնում. դուրսը նրանց վրայ պահպանութիւն են անում քուրդ հովիւները, անակնթարթ հսկելով: Ագնիւ քրդեր և քաջ: Հոլիկները շրջանաձև շարուած են մի բաւական կլոր հրապարակի շուրջը. այդ հոլիկներով շրջափակ տեղում հանգչում են գիշեր ժամանակ ոչխարները. հոլիկներից դուրս կանգնած են հայերի մօտ ծառայող քուրդ հովիւների վրանները, որոնց մէջ զետեղվում են նրանք իրանց ընտանիքով և բոլոր կա-

ղողութիւնով։ Քրդերի վրանները կոչվում են կոն. գետին ցցած մի քանի ձողերի վրայ փռում են մի մեծ՝ այծի մազից խոշոր գործած՝ շալ, որի ծայրերը պարաններով կապում են գետնում ամրացրած ցցերին և շրջապատում են եղեգնից կամ բարակ ճիպոտներից կազմած ցանցապատով։ Տաք եղանակին քրդերի վրաններում շատ ախորժելի է. իսկ ցուրտ, անձրև եղած ժամանակ՝ անտանելի է։ Աւելի յարմար են և ցրտից ու անձրևից ապահովուած՝ Թուրքերի վրանները, որոնք կոչվում են ալաչուխ, դաղեա և չադրը. դրանցից ամենից փառաւորը, մեծը և հաստատն է ալաչուխը, որ շինուած է այսպէս. գետնին խփում են մի բաւական հաստ սիւն. դրանից 4—6 արշին հեռաւորութիւնով շուրջ տնկոտում են կամարաձև ձողեր, որոնց վերի ծայրերը բերում ամրացնում են սիւնի ծայրին գտնուած փայտի հաստ շրջանակին. ապա այդ շառաւիղներից շինուած կիսագունդը ծածկում են հաստ թաղիքով. ներքևից շրջապատում են եղեգնի ցանցապատով, կապկապում պնդացնում են պարաններով, մի կողմից մուտք են թողնում և այլն։ Դաղեան հասարակ, թեթև, փոքրիկ ալաչուխ է, առանց սիւնի. չադրը հասարակ սպիտակ կըտաւից շինած վրան է, որպիսին գործ է ածվում պատերազմների ժամանակ։

Լեռներում ամեն արօտատեղի մի և նոյն արժանաւորութիւնը չունի. արօտի արժէքը և հարկէ նախ և առաջ կախուած է խոտերի տեսակից և որակից, նմանապէս նշանակութիւն ունի որ և է արօտ գնահատելում նրա դիրքը, ջրերը, ճանապարհները և այլն։ Արդ, մի թեթև ակնարկ ձգելով Գեղարքունիքի լեռնային արօտների վրայ՝ կըլսեշատակեմ միայն, թէ որ սարերն են առաջնակարգ համարվում իրանց պատուականութիւնով և պիտանութիւնով անասնապահութեան համար։ Տեղական ժողովուրդը առհասարակ առաջնութիւնը տալիս է Աղմանկան սարերի արօտներին, բայց ամբողջ գաւառում ամենամեծ հռչակը վայելում են Այրիճա ասուած մի խումբ արօտները։ Այրիճան արօտականների համար մի դրախտ է, մեծ բախտաւորութիւն է համարվում, ով ունի այդտեղ արօտատեղ. ամբողջ գաւառում միայն Այրիճան է, որ ամառը կատարելապէս լիքն է լինում անասնապահներով։ Այրիճան բռնում է Աղդաղի, Էքինչլարի, Դիտվանքի, Աբդուլհասարի ստորոտները և մեծ ու փոքր Այրի

գետակների հիանալի, չտեսնուած, հարթ հաւասար հովիտները։ Այրիձայում խոտը ամենաընտիր տեսակիցն է, թանձր բուսած. ժողովուրդի ասելով՝ խոտը այդ տեղ իւղալի է, ծաղկոտ է. չկան այդ տեղ անձռռնի, հաստաբեստ, անպէտք բանջարներ. Աստուծու օրհնած արօտներ են. դիրքերը հանգիստ են անասունների համար, սուր դարիվերներ չկան. ճանապարհների ամեն տեսակ յարմարութիւն, ամենապատուական ջրերի անբաւ առատութիւն։ Կան այդ տեղ երեք մեծ աղբիւրներ՝ երկաթա—ծծմբային ջրի և մի մեծ աղբիւր՝ բնական գելտերեան ջրի։ Այս կողմերը հին Հայոց դարերում կոչւում էր Այրից գաւառ, այսինքն քարանձաւների, կարանների գաւառ, որովհետև այդ տեղը լիքն է հրաբղխային այրերով, որ և հիմա իսկ թուրքերը սրան անուանում են Մաղարախանայ, որ նշանակում է նոյնը, այսինքն՝ այրերով լի տեղ. հին անունը միայն կրում է գետը, որ ասւում է Այրի-չայ-գետ, որից դուրս է եկել «այրիձա» բառը, որ է մի ընդհանուր անուն գետի երկու կողմը տարածուած մեծաքանակ ընտիր արօտների։ Այրիձան թուրքերի և քրդերի ձեռին է, բայց մի խոշոր մասն էլ գրաւած են Դաւալուեցի հայերը։ Այրիձայից յետոյ գալիս են Գեոզալդարայի արօտները, որոնք համատարած ծաղկազարդ են, իսկ խոտերը սակաւ, դիրքերն էլ սուր գառիվայրեր են։ Բեյթիի արօտները նոյնպէս հռչակաւոր են և ընտիր են միայն տեղ-տեղ։ Բեյթիի սարերը փչացնում են անհամար դաշտամուկները։ Վերջին տեղն են բռնում Նանըխ լերան արօտները, որ գրեթէ ամեն կողմից պակասաւոր է։ Այրիձայում, մանաւանդ Բեյթիում և Գեոզալդարայում՝ ամառը արօտների խոտը նոյնպէս մեծ քանակութիւնով հնձւում է ձմեռուայ պաշարի համար։

Խոշոր անասունների տեսակներից ամենից ընտիրը և ցեղականը համարվում է Բալբաջարի կովն ու եզը։ Բալբաջարը մի բերրի, փոքրիկ գաւառ է հիւսիսային Արցախում։ Բալբաջարի անասունները նշանաւոր են իրանց խոշոր զարգացած մարմնով և կաթի առատութիւնով, առոյգութիւնով և ոյժով. նրանց գոյնը փայլուն կարմրագոյն է, եղջիւրները բոլորաձև։

Յետոյ գալիս են՝ իրանց պատուականութիւնով՝ Վայոց ձորի և քրդերի անասունները. ամենից ստոր են համարվում Շարուրի և Նոր-Բայազիդի գաւառի անասունները։ Շարուրի

անասունները առհասարակ նիհար են, թոյլ, գորշ գոյնով. Նոր-Բայազիդինը մանր են, շատ կան և սև գոյնով։ Երկարատև ձմեռը, ուտեստի պակասութիւնը և վատութիւնը դրանց շատ են վնասում։

Այդ կողմերի հօտերի ոչխարները երկու ցեղի են. Ղարաբաղի ոչխարի ցեղ ու քրդի կամ Արարատեան ոչխարի ցեղ։ Ղարաբաղի ցեղի գլխաւոր և նշանաւոր յատկութիւնն է, որ նրա միսը քաղցր է, անոյշ է. իսկ Արարատեան ցեղը նշանաւոր է իր բրդի պատուականութիւնով։ Ղարաբաղի ոչխարին անուանում են տեղացիները՝ հիրիկ, իսկ Արարատեան ոչխարին կոչում են մազեղ. Ղարաբաղի ոչխարի գլուխը հաստ ու կոպիտ է, ականջների միայն տեղն է երևում, աչքերը պլուզ են և վայրագ. երանը գլորիկ է և հաւաք. դմակը գունդ, կիսով չափ դուրս շրջուած, պոչը հաղիւ նկատելի, բուրդը կոշտ է, հաստ ու կարճ, գոյնը կարմրագոյն, սև և գորշ, միսը պատուական։ Արարատեան ոչխարի գլուխը գեղեցիկ է, ականջները երկար կախ ընկած, նայուածքը անոյշ, երանը կախ ընկած, դմակը կրկնակի, մեծ և փոքր, երբ վրայ կախ ընկած, ունի փոքր պոչ, միսը հասարակ, բուրդը ընտիր, երկար և նուրբ. գոյնը՝ մէկ տեսակինը բոլորովին մաքուր ճերմակ, միւսը տեսակինը՝ կարմրագոյն։ Մազեղ կամ Արարատեան ոչխարի կարմրագոյն տեսակի միսը աւելի լաւ է քան սպիտակինը և նրանցից աւելի դիմացկուն են վատ եղանակին և ուղեղնացութեան միջոցին, բայց բուրդը ստոր է քան սպիտակինը։

Անասունների հիւանդութիւնից նշանաւորները սրանք են. ազար կամ չօմա, տարափոխիկ. պատահում է մի քանի տարին մի անգամ և ամբողջ նախիրներ է փչացնում. դաբաղ—կաշու հիւանդութիւն. պատահում է, երբ տարին չորային է լինում կամ շատ խոնաւ. ընկնում են գլխաւորապէս ոչխարները, ոտերից մէկի կամ միւսի կճղակների արանքը վէրք է գոյանում, որդնոտում կամ լեզուն է վէրքոտում. խոտացաւ ընկնում են խոշոր և մանր անասունները՝ մանաւանդ գարնան, երբ նիհարած դուրս գալով գոմերից և սարի առատ, թարմ, հիւթալից և ծաղկալից խոտը չափազանց արածելով, փորերնին ուռչում է, որից և մեռնում են. շատ անգամ օգնում է, եթէ ուռած փորը ծակում են, վնասակար գազերը դուրս են գալիս, կենդանին ողջանում է. Ցորախտ. կենդանին

սկսում է սաստիկ հագալ և որդները դուրս թափել. քիչ է պատահում, որ դրանցից նրանք փրկուեն. քամի, որէ ըէվմատիզմ. պատահում է ցրտահարութիւնից. կենդանու ոտերը բոլորովին կծկվում են. դիժ, պատահում է ոչխարներին, երբ նրանց ուղեղում գոյանում են մի տեսակ որդներ. կենդանին սկսում է ուղիղ վազել այս կամ այն կողմը և արագ-արագ պտոյտ գալ. միակ միջոցն է մորթելը։ Անասունները նոյնպէս հիւանդանում են ծաղկով և ջերմ ու փենդով։

Թուրքերը և քրդերը սարում եղած ժամանակ գրեթէ ոչինչ զբաղմունք չունին, աւելի զուարճութիւնով, հարսանիքներով են անց կացնում նրանց ժամանակը. բոլոր աշխատութիւնները ամարանոցում համարեա կիներին վրայ է. կթել, մէրել, խնոցի հարել, հաց թխել, կերակուր եփել, լուանալ և այլն։ Միայն հողագործութիւնով չզբաղվող թուրքերը և բոլոր քրդերը ամառուայ վերջերը վեր են առնում նրանց գրաստները՝ եզ, էշ, ձի և գնում են Երևան, Կողբ, Նախիջևան և բերում են աղ, միրգ, ծիրան, վարունգ, սեխ և խաղող ու այդ ամենը բազմապատիկ թանգ փոխանակելով ալիւրի և ցորենի հետ Նոր-Բայազիդի գաւառի գիւղերում, այդ հեշտ միջոցով ձեռք են բերում նրանց ամբողջ տարուայ հացի պաշարը. այդ ժամանակ. արօտներում մնում են միայն կիները և հովիւները։

Սարից ժողովուրդը քաշուելուց մի երկու շաբաթ առաջ էջմիածնի գործակալը և Սևանայ վարդապետը շրջում են հայերի գոմաները և ժողովում են լուղ, պանիր՝ յիշեալ վանքերի համար։ Հայ մանրավաճառները նոյնպէս այդ ժամանակները ման են գալիս լեռներում և հաւաքում լուղ, պանիր նրանց ապրանքի գնով։

Օգոստոսի կէսին լեռներում եղանակն արդէն սկսում է հակուել դէպի աշնանայինը. ցրտում է. կանաչ արօտները դեղնած են շատ տեղերում. ամենաբարձր սարերի կատարներին մէկ-մէկ ձիւն է նստում. ամպ, մշուշ, տեղատարափ անձրևներ, մանր կարկուտ կամ ձիւնի գնդակներ, որին այստեղ ասում են խլորիկ, և այլն։ Անասնապահ ժողովուրդը արդէն սկսում է մտածել լեռներից իջնելու մասին։

Օգոստոսի երկրորդ կէսից նախ թուրքերը և հայերը սկսում են շարժուիլ և շարան-շարան տուն վերադառնալ. լեռներում տիրում է հետզհետէ ամայութիւն և տխրութիւն.

սաստկանում են գողութիւնները, վասն զի վերադարձող քրդերը և Թուրքերը փախցնում են հայերի անասունները գիշերներով և Թաքչում են դատարկուած լեռների ծերպերում և այրերում։

Ամենից վերջը սարերից հեռանում են քրդերը. սեպտեմբերի 15-ից նսեմ պատկեր է ներկայացնում շուրջը, լռութիւն համակ, բազէները միայն պտոյտ են գալիս բարձր փապարներում. վայրի սև բադերը, որոնք Սևանի ափերում էին ամառը՝ մեկնում են դէպի հարաւ. մարդիկ իսկ՝ տխրութիւնով են բաժանվում լեռներից։ Մնում են սարերում միայն ոչխարների հօտերը իրանց հովիւներով, որոնք մօտները պահում են միայն մի էշ, որը կրում է նրանց հացի պաշարը, իսկ իրանք հովիւները գիշերները կուչ են գալիս մի որ և է ժայռի կտորի ներքև. սեպտեմբերին պարզ օրեր են լինում և լեռները կրկին թեթև կերպով կանաչում են աշնան մանր կանաչով և ծաղիկներով, որը արածում են ոչխարները մինչև առաջին մեծ ձիւնի գալը, որ արդէն մնում է մինչև միւս գարնան. այդ ժամանակ շուտով ոչխարներն էլ քաշվում են ձմեռանոց տեղերը կամ փակվում են լեռնային գոմերում ու չոր խոտով կերակրվում։ Վաճառելու ոչխարի հօտերն էլ լեռներից ուղղակի ոչխարատէրերը մի քանի հովիւների հետ տանում են վաճառելու զանազան քաղաքներ՝ մինչև Բաքու։ Խոշոր անասունները դուրս չեն տանում ծախելու, այլ գնողները իրանք զանազան քաղաքներից գալիս են Նոր-Բայազիդ և այստեղից սկսած գնելով կով, եզ, ձի, պատելով գիւղերը՝ գնում են մինչև Քալբաջար և ապա յետ դառնալով՝ հաւաքում են գնած անասունները և նախիր կազմած՝ հեռանում։ Նոր-Բայազիդի գաւառի մի եզ կամ կով կարժենայ 12 ռուբլուց մինչև 18. իսկ Քալբաջարի գաւառինը 18 ռուբլուց մինչև երեսուն։ Ձիի երամակները ունեն միայն Թուրքերը. իւրաքանչիւր Թիւրք գիւղի արօտում միշտ լինում են 60—70 մատակ ձիեր, որոնց չեն բանեցնում, այլ պահում են միայն որ ծնեն՝ ձի վաճառելու համար։

Հէնց այս մի քանի համառօտ հաղորդած տեղեկութիւնները բաւական են, որ կարողանանք ասել, թէ մեր երկրում մեծ ասպարէզ և պատրաստ նիւթ կայ կանոնաւոր և ընդարձակ չափով անասնապահութիւնով պարապելու համար, որ նա լինէր ոչ թէ մի խեղճուկ ապրուստի միջոց, այլ մարդավայել բարօրութեան և հարստութեան յորդաբուղխ, մշանջենական աղբիւր։

Ն. ՏԷՐ-ԱՒԵՏԻՔԵԱՆ

ՀԵՏԱՔՐՔԻՐ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Ռումինիայի թագուհու հեղինակութիւնը: Ռումինիայի թագուհին, ինչպէս յայտնի է, պարապում է գրականութեամբ եւ իր գրուածների տակ ստորագրում է կեղծ անուն „Կարմէն Սիլվա“: Գերմանական Վիլհելմ կայսեր ծննդեան օրը ռումինական թագուհին Կայսեր ներկայացրաւ իբրեւ նուէր մի գեղեցիկ դիւցազներգութիւն, բաղակցած հարիւր ոտանաւորներից: Այդ դիւցազներգութեան մէջ թագուհի — բանաստեղծուհին նկարագրում է համառօտապէս Վիլհելմ կայսեր կեանքը:

Դիւցազներգութիւնը գրուած է մագաղաթի վրայ, զարդարուած հիանալի ծաղիկներով:

—

Լիմոնները լաւ պահպանելու համար, Իտալիայում դնում են կուէ ամանի մէջ եւ վրան ածում են հորի ջուր: Ջուրը փոխում են ամեն օր եւ ամանը պահում հով տեղում:

—

Հին բրօնզի առաւելութեանը նոր կերպարանք տալու միջոց: Նախ եւ առաջ պէտք է նրանց լաւ մաքրել կեղտից եւ փոշուց, յետոյ սրբել աղէ — թթուի մէջ թրջած քաթանէ սրբիչով (մի մաս աղի թթու, երկու մաս ջուր) յետոյ քսել պրովանսի իւղ, բրբի սրբիչով:

—

Նաւթ: Նաւթի լամպաները պայթելուց պահպանելու համար, ամենից առաջ պէտք է նրանց բոլորովին չլցնել նաւթով, որպէս զի շատ չտաքանան. օգտակար է նոյնպէս երբեմն երբեմն ածել լամպի նաւթի մէջ քիչ երկաթաթթուային նատր (սոդա): Նաւթն այրելու ժամանակ հոտը ոչնչացնելու համար, ամենալաւ միջոցն է նաւթի ամանի մէջ մի կտոր շաքար ձգել:

—

Ամերիկայի Սենատի անդամ Ստանդօրփը նուիրել է 20 միլիոն դոլլար (40 միլիոն ռուբլի), որ իր հայրենիքում հիմնեն բարձրագոյն դպրոց (համալսարան տեխնիկական դպրոցով): Դպրոցը պէտք է կառուցուի Ս.-Ֆրանցիսկոյի մօտ Մէնլօի սքանչելի այգեստանում: Այդ միւնոյն տեղը պէտք է կառուցուին երկու սեռի համար նախակրթարաններ: Բոլոր այդ դպրոցները հաւասարապէս իրաւունքներով պէտք է ընդունեն թէ տղայոց եւ թէ օրիորդներին: Շինութիւնները պէտք է լինին հսկայական եւ շքեղ: Ս.-Ֆրանցիսկո պէտք է միանայ երկաթուղիով Մէնլօյի հետ: Աշխարհիս երեսին ամենանշանաւոր պրոֆէսորները պէտք է դասախօսեն այդտեղ:

ՀԱՆԵԼՈՒԿ

Ո՛չ աչք ունիմ ո՛չ բերան,
Թուքակի պէս կրխոսիմ,
Ոտք ալ չունիմ իբր դազան,
Քաղքէ քաղաք կըշրջիմ.
Խինդ, վիշտ յիմ ծոց են թաքուն.
Ի՞նչ է արդեօք իմ անուն։

Առաջ. Մ՚իհրան Թիւրքեանց.

ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆ

Ե.

Մ՚եր հասարակ անուններեր սեռական հոլովը կազմվում է՝ ուղղականի վրայ մէկ Ի աւելանալով, այլև ՈՒ, եթէ ուղղականի վերջաւորութիւնն է Ի, ինչպէս՝ գարիի կամ գարու, գինիի կամ գինու։ Այստեղից պարզ երևում է, որ սեռականի Ի գիրը աւելանում է ուղղականի Ի գրի վրայ, իսկ ՈՒ-ն չի աւելանում Ի-ի վրայ, այլ փոխանակում է նորան, այսինքն՝ սեռականը չի դառնում գարիու, գինիու, այլ գարու, գինու։ Արդ գտէք յաճախ գործածվող Ի վերջաւորութեամբ բառեր, որ սեռականի վրայ աւելանայ ու, առանց Ի-ն կորցնելու, և ուրիշ բառեր էլ գտէք՝ գարձեալ Ի վերջաւորութեամբ, որոնց կարելի չլինի ոչ ՈՒ և ոչ Ի աւելացնել, այլ՝ ՍԻ, ինչպէս՝ երկու, երկուՍԻ։ Գտնելուց յետոյ իմացէք նաև դրանց այդ ձևն ընդունելու պատճառը։

Ղարաբաղի բարբառին տեղեակ ուսանողներին առաջարկում ենք՝ գտնել այդ բարբառում մի յաճախ գործածուող բառ, որի սեռական մասնիկը փոխանակ Ի կամ ՈՒ լինելու, լինի՝ ՀՈՒ։

Ղ*

Առաջ. Յ. Տէր-Յովհաննիսեան.

Այս ցանցերի մէջ պէտք է տեղաւորել.—2 կ, 3 պ, 4 ա, 2 է, 1 ն, 1 ս, այնպէս որ ինչ բառեր կազմվում են վերևից ներքև կարդալիս, նոյն բառերը կազմուին ձախից աջ կարդալիս։



ՐԵՐՈՒՍ

ՉՈՒՏԱՍԵԼՈՒԿ

Պատուհանի բաց փեղկը պէտք է փակես, փակ փեղկը պէտք է բանաս։

Նախընթաց համարի Գ. առաջարկութեան պատասխանը չստացանք, իսկ չորրորդ առաջարկութեան պատասխան շատ տեղերից ստացանք, միայն մեծ մասամբ դրաբար, ինչպէս՝ հատ, մուտ, եայլն, բացի երկուսից՝ ինչպէս՝ արի, բաց։ Մենք դեռ կսպասենք, գուցէ գտնողներ լինին։

Խմբագիր-հրատարակիչ՝ ՏԻԳՐԱՆ ՆԱԶԱՐԵԱՆՑ